ՏԵՂԵԿԱՆՔ

ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ»

Հոդված 43. Հեղինակազորումը

1. Իրավաբանական կամ ֆիզիկական անձը Հեռարձակողի կարգավիճակ ստանալու համար կարգավորող պետական մարմին է ներկայացնում հեղինակազորման հայտ, որում նշվում են՝

1) հայտատուի անվանումը.

2) իրավաբանական անձի գրանցման համարը, իսկ ֆիզիկական անձի համար՝ հաշվառման համարը.

3) իրավաբանական անձի գտնվելու վայրը, իսկ ֆիզիկական անձի համար՝ հաշվառման վայրը.

4) հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն.

5) տեսալսողական ծրագրի անվանումը.

6) հայտը ներկայացնելու ժամանակաթիվը.

7) հայտատուի ստորագրությունը:

2. Հեղինակազորման հայտը բավարարվում է այն կարգավորող պետական մարմին ներկայացվելուց հետո՝ տասնօրյա ժամկետում:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 1-5-րդ կետերով նախատեսված որևէ պայմանի փոփոխության դեպքում Հեռարձակողը եռօրյա ժամկետում այն ներկայացնում է կարգավորող պետական մարմին:

4 Սույն հոդվածի 1–ին մասի 1–ին կետով սահմանված անունը չի կարող համընկնել կամ շփոթելու աստիճան նման լինել ընկերության ապրանքային նշանի կամ անվան հետ, իրենց գովազդներում օգտագործված գրաֆիկական, ձայնային նշաններին նույնական կամ շփոթելու աստիճան նման նշաններին, որը վերջին հինգ տարում զբաղվել է շահումով խաղի (ինտերնետ շահումով խաղի) կամ վիճակախաղի կազմակերպչի գործունեությամբ: